ՆՈՐ-ԴԱՐ

№ 53 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հարաթ 8 Ապրիլի 1889 Հարաթ 8 Ապրիլի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 53

Տարեկան 10 բուբլի, վեց ամսվաց՝ 6 բուբլի, եռամսյա ամսվաց՝ 3 բ. 50 կ., ամսվաց՝ 1 բ., հատուկ՝ 5 կոպեկի։
Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրության հասցեն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարության բառին 2 կ., բեկլամների համար կբնդհատակին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— Հեռագրություն։ — Քրոնիկոն.—Լուրեր Նամակ Լոնդրայի հանուր Ապջիկների միջազգային առևտրի։ Թղթակցություններ.—Մօղոկ։ Կնիչ։ Քաղաքական.—Քաղաքական լուրեր։ Խառն լուրեր։ «Նոր-Դար»-ի պատասխանները։ Յայտարարություններ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒԱՆՍԱՅԻՆ ԴՈՐՏԱԿԱՒԱՒՈՐԻՉԻՆ

— ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 ապրիլի.—Հրատարակուած է պետական խորհրդի որոշումը՝ Թիւրքեստանում նոտարական բաժինը գործադրելու մասին։

Այսօր Վիլնօից Բերլին ուղևորեցաւ գեսպան Նելվլովը։

Բացատրուած է, որ ծառայող և պահեստի սպաներն իրաւունք ունին երկաթուղով գնալու արտօնութիւն վայելել մարզուելու համար գնալու օրից մինչև արձակուելու օրը։

Վարչային բաժնի կանցելիարիայի տեսուչ Վերխովսկին փոխնահանների մինիստրութեան խորհրդի անդամ է նշանակուած. յիշեալ կանցելիարիայի փոխ-տեսուչ Սլօբօդչիկովը—տեսուչ։

«Нов. Вр.»-ն հաղորդում է, որ արդարադատութեան մինիստրի օգնական Մարկովը նշանակուած է սենատի քաղաքացիական վճռաբեկ տեհանի նախանդամ։

ՕԴԵՍՍԱ.—Աշնանացանները հարատում բաւարար են։

ՊԱՐԻԶ.—Հեռախուզիչ և մեղադրիչ յանձնաժողովը, որ ինն հոգու մասնախումբ է կոչւում, երեկ կայացրած երկու նիստերում մերժեց լրագիրներին տեղեկութիւններ հաղորդելու առաջարկը և վճռեց անպայման գաղտնապահ լինել. նա սկսու գործին վերաբերեալ գրութիւնները քննել։

Հեռախուզիչ յանձնաժողովի նախագահի հրամանով տնային խուզարկութիւններ են արել Բուլանժէի, Դիլլիօնի և Րօշֆօրի տներում։

Ներքին գործերի մինիստրը պրեֆեկտներին առաջարկել է փողոցներում չթողլ տալ այնպիսի ցոյցեր, որոնք վտանգ են սպառնում հասարակական անդորրութեան։

ՊԱՐԻԶ.—«Autorité»-ի ասելով, բարձրագոյն տեհանի հեռախուզիչ յանձնաժողովի նախագահ Մերլէնը կարգադրել է գեներալ Դիւբարէլլի և Կասսանիակի մօտ խուզարկութիւն անել։

«Presse»-ը հաղորդում է, որ վերջին վայրկենին Մերլէնը 60 կարգադրութիւն է ստորագրել ձերբակալութիւններ անելուն վերաբերեալ։

Լազերը և ազգային կուսակցութեան յանձնախմբի միւս անդամներն երեկ Բրիւսսէլ ուղևորեցան, ուր այսօր ծանրակշիռ խորհրդաժողութիւն է լինելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 ապրիլի.— Հրատարակուած է այս տարի ընդհանուր մարզման համար հաւաքել եւրոպական Ռուսիայից և Կովկասից, հետևակ և բերդային ռմբաձիգ զօրքի զինուորներից՝ 1884 թուին իրենց ծառայութեան ժամանակամիջոցը լրացնողներից՝ որոնք իսկական ծառայութեան մէջ եղել են մէկ և երկու տարի, որպէս մի տարի ծառայողներ, և առ հասարակ այն կամաւոր զինուորներին, որոնք գնդի մէջ ուղղակի պահեստ են հաշուած կամ զօրքի մէջ 3 տարի են ծառայած. է 1879 թուին իրենց ծառայութեան ժամանակամիջոցը լրացնողներին, որոնք արտօնութեամբ 3 և 4 տարի կամ սովորական 5 տարին ծառայել են, որոնք պահեստ են հաշուած ուղղակի զօրքից կամ արձակուրդից՝ զօրքի մէջ 3 տարի ծառայելուց յետոյ։ Ժողովուելու սկիզբը համարուում է օգոստոսի 15-ից մինչև Հոկտեմբերի 1-ը, նայելով տեղին։ Զինուորներին հաւաքուելու համար ժամանակ նշանակած է՝ կէտում համարուողներին—21 օր, իսկ է կէտում համարուողներին—14 օր։

«Journal de St.-Pétersbourg»-ը հերքում է այն լուրը, թէ Պարսից կառավարութիւնը Կելատ-Նադիր բերդը Ռուսիային է զիջել։

Կրկին թոյլ է տրուած «Путь»-ի հատով վաճառումը, իսկ արգիլուած է «Театръ и Жизнь» թերթի հատով վաճառելը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Սահման որոշելու օրէնքների և որոշումների վերաքննութեան համար ստադատախազ Պլատօնովի նախագահութեամբ կազմուած է յանձնաժողով։

ՊԱՐԻԶ. (Սեպհ. թղթակ.)—Ինն հոգու յանձնախմբի չորս անդամները, ի թիւս որոնց է և Մերլէնը, որոնց դատական քննիչ Օտալէնի հետ յանձնարարուած էր քննութիւն անել, երէկ երկար լսում էին գեներալ Սօսիէին, իսկ այսօր՝ Ֆրէյսինէին։

Լուրեր են շրջում, թէ չպիտի շարունակեն այն մեղադրանքը, թէ կառավարութիւնը փոխելու համար փորձեր են եղել, հապա միայն պիտի դատ սկսեն զօրքի մէջ կուսակիցներ գտնելու համար փորձեր անելուն համար, որը զինուորական դատարանի գործն է և այսօր խուզարկութիւններ են արել Պարիզում և զաւառներում, ի միջի այլոց, Գիլլիօնի կալուածքներում (Բրէտանում)։

ԼՕՆԴՕՆ. — Անգլիական բանկը դիսկօնտը 3-ից իջեցրեց 2½%-ի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ
6 Ապրիլ 1889 թ.։

Լօնդօն 94 բ., 93 բ. 60 կ., 94 բ.
Բերլին 46 բ., 45 բ. 90 կ. 46 բ.
Համբուրգ 37 բ. 10 կ.

Պօլուիմպերիալ	⅞ բ. — կ. սակ.
Մաքս. կուպօն	150 բ. — կ. սակ.
Արծաթ	1 բ. 12 կ. սակ.
Բօրտալին դէս	5¼ և 6½%

Պետական բանկի 5% տոմս.

1-ին շրջանի	99 բ. — կ. պն.
2-րդ	99½ բ. — կ. սակ.
3-րդ	99 բ. — կ. պն.
4-րդ	99 բ. — կ. պն.
5-րդ	99 բ. — կ. պն.
6-րդ	99¼ բ. 87 կ. սակ.
Ակցիա վոլգա-կամա	
Թիւն 1889 թ.	— բ. — կ. սակ.
4%-ոց տոմսեր	84 բ. 87 կ. սակ.
100 և 1000 բ. արևելեան վոլգա-կամեան 5% տոմսեր,	
1-ին շրջանի	99¾ բ. — կ. պն.
2-րդ	100 բ. — կ. սակ.
3-րդ	100 բ. — կ. սակ.
Առաջին 5% ներքին վոլգա-կամեան տոմսեր	271 բ. — կ. սակ.
2-րդ	243½ բ. — կ. պն.
5/2% ընկերք	102⅜ բ. — կ. սակ.
Ակց. բենա 1883 և 1884 թ.	169 բ. 87 կ. և 169½ բ. սակ.
Թիւն վար. վարկի ընկերք.	
օբլեդ.	— բ. — կ. սակ.
Պետական բանկի	
Երկաթուղու բենա	— բ. — կ. սակ.
Սպեռատ. հոպ. բանկ.	
կէ զրատակղմէր	— բ. — կ. սակ.

Բօրտալին արտասր. թուղթը հատատուն է։

ՔՐՈՆԻԿՈՆ

Զորեքշաբթի, ապրիլի 5-ի առաւօտեան, Պետերբուրգից Թիֆլիս ժամանեց երկրի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Կօրսակովը։

— Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան այս վերջին չորեքշաբթեայ նիստում նոր անդամ՝ ընտրութեան մասին օրապիր են կազմել։ Ինչպես մեզ հաղորդում են, նոր անդամը հրաւիրում է հինգ տարի ժամանակով։ Այս առթիւ հոգաբարձութիւնը հետաքրքիր նորութիւն ունէր, որ իւր վերջին նիստին ստացել։ Մի քանի հոգաբարձուներ այդ երկրորդական նիստին բացակայ էին, առարկել, որ այն օրը նիստ կարող չէ լինել, այլ պէտք է հետևեալ գնալ։

Օրերով իշխանուհի Նանէ Ալէքսանդրեան Մելիքեանը, որի արհեստական գեղեցկութիւնը փոխնջ Կայսրուհու չընորհակալութեան արժանացաւ, այժմ պատրաստել է նոյնպիսի, բայց աւելի փոքր չափով, մի փոխնջ գիւղատնտեսական սերմերից։ Այդ փոխնջը տալիս ուենգամը մինչ տեսնելու և պիտի անանք, որ հայի մեծ համբերութիւն և աչխատութիւն է հարկաւոր, որ կարելի լինի այդպիսի մի արհեստական փոխնջ կազմելու ամենամանրիկ սերմերից։ Ինչպես մեզ իշխանուհին յայտնեց, այդ փոխնջը պիտի ուղարկուի Պարիզի աչխարհանդէսին։

Պետերբուրգի հնագիտական ընտանեաւոր խորհուրդը վրայի հնագէտ Դ. Զ. Բակրադէին իրեն աչխատակից-անդամ է ընտրել։

Հինգչաբթի, սուգի պիտերը, Թիֆլիսի գրեթէ բոլոր եկեղեցիներում մեծ բազմութիւն կայ, մանաւանդ կանայք և օրիորդներ։

Կովկասի գիւղատնտես. ընկ. «Société des agricultours de France» ընկերութիւնից առաջիկ է մի պրոեքտ, որով խնդրում է մանրամասն տեղեկութիւն Կովկասի անտեսական գրութեան և առաջադիմութեան մասին։ Նոյնպես հրատարակում է Պարիզում, համաչխարհային հանդէսի միջոցին, յատնիկ երկրագործական համագումարին մասնակցել։

Լուսաւորութեան մինիստրութիւնը յայտարարել է, որ գիմնազիաների և իգական դպրոցների առաջին դասարաններն աշակերտ ընդունելու համար կատարուող հարցաքնութիւնները կատարուելն մայիսի 1-ից, սկսած սոյն տարուց։ Այդ կարգադրութիւնը վերաբերում է ինչպես դրան, նոյնպես և պատրաստական դասարաններից առաջինի դասարան անցնող աշակերտներին։

— Թիֆլիսի նահանգապետ իշ. Շերվաշիձէի կալուածքում մայիսի 1-ում հաստատուած Այգ ատթիւ, տեղական թերթերի տեղով, արդէն տեսած կարգադրել է, որ իշ. Շերվաշիձէի բոլոր անչարժ կալուածքների վրայ արգելք դրուի։

— Հանդուցեալ Պետրոս Շանչեանցի դրացարանին, ինչպես լսում է, նուիրաբերուած է ս. Էջմիածնի գրատունը։

— Մօտիկ Թիֆլիսից անցնելով Թէհրան ուղևորեալ ֆրանսիական ինժեներ Դէնոնն, որ Պարսկաստանում առաջին երկաթուղին չինողն է եղել Պ. Դէնոնն, լինելիս լսել է «Кав.»-ը, արտօտութիւն է տուցել Պարսկաստանում ձիաքաչ չինելու, որ, եթէ տանձին արդիլքներ չլինին, այս տեսակ կը չինուի։

— ԲԱԳՈՒԻՑ մեզ հետևեալ յայտնում են, որ Կարա-Մարդան իւր երկրային խմբով գալիս է Թիֆլիս Զատկի տօներն մի քանի կինոգրաներ տալու Միքայէլեան-Երկաթուղու գործոյի օգտին։

— Ս. Յարութեան տօներից յետոյ «Նոր-Դար»-ի առաջիկայ համարը լոյս կը տեսնի հինգշաբթի, ապրիլի 13-ին և չորեքշ. ապրիլի 15-ին։

— Սոյն 1889 թ. մարտի ընթացքում Թիֆլիս քաղաքի եկամուտը եղել է 38,501 բ. 24 կ., իսկ յունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը—235,964 բ. 89 կ., ելք է եղել է մարտին 48,944 բ. 22 կ., իսկ յունվարի 1-ից մինչև ապրիլի 1-ը—161,090 բ. 58 կոպեկ։

— Քաղի ջուրը բաւական զգալի կերպով աւելացած է մանաւանդ վերջին օրերս, որովհետև եղանակն արդէն ամառնային է դառնում և արևը խիստ տաքացնելով շրջակայ լեռների ձիւները արագ հալչում են։

— ԲԱԳՈՒԻ Մարզասիրական Ընկերութեան Խորհուրդը ուղարկելով խմբագրութեան սոյն հրաւէրը, խնդրում է տպագրել նրան «Նոր-Դար»-ի մէջ ի գիտութիւն Ընկերութեան բոլոր անդամների և հայ-հասարակութեան։

«Բաղուի Հայոց Մարզասիրական Ընկերութիւնը վճռել է հանդիսաւոր տօնել իւր հիմնադրութեան 25-ամեայ յոբելեանը, որ լրանալու է ներկայ թուականի մայիսի 21-ին։ Հանդիսա կարգադրիչ յանձնաժողովը պատրաստ է համաձայն իրեն ծանուցանել այս մասին Ընկերութեանս բոլոր անդամներին և հայ հասարակութեան, յայտնելով միանգամայն, թէ հանդէսը լինելու է ներկայ 1889 թուականի մայիսի 21-ին, Բաղուի Հայոց աղքատանոցի ընդարձակ սրահում այսպիսի եղանակով.—ընթերցուին 25-ամեայ համառօտ պատմութիւն Մարզ. Ընկերութեան, ձառախօսութիւններ, երգասացութիւն, ընթերցուին ուղերձների, հեռագրների և այլն։

Թոլոր գրաւոր հաղորդագրութիւնները խնդրում ուղարկել Ընկերութեան Խորհրդի նախագահ պ. Անտոնեանցի հասցէով։

— ՇՈՒՇՈՒԻՑ.—Մարտի 31-ին, Կովկասեան առ. չրջանի հոգաբարձու պ. Սանովկին այցելից Շուշու բէալական և միւս ուսումնարանները։ Բէալական ուսումնարանին թոյլ է տուել մինչև 4 դասատունը կրօնը դաս տալ։ Սրբազան առաջնորդին այցելութիւն գնաց, նոյն օրը. Գեր. Առաջնորդն էլ փոխ այցելութեան գնաց։

—Կարգադրութիւն է արած, որ Զառկոյ համար Սալեանից ձուկ չբերեն, ի թիւս մեռ ձկների և ուրանրուս կոչածը։

—Այս օրերս առթիւ ունեցանք տեսնելու մի հարիւր տասնեակ տարեկան թուրքի. նա ճանապարհ է գնում 20 տարեկան երիտասարդի նման. առոյգ է ու առաւիներից ոչ մէկին էլ դեռ չէ ընկել։ Այդ թուրքն ասում է, որ յանկարծամահների և այլ մահերի պատճառներն մարդիկ իրենք են, որ ամեն մի չհչին բանի համար սովոր են բժչկի դիմելու և դեղ գնելու. եթէ գլուխս ցաւում է, կամ ցաւել է—քացախ եմ քսել ատոջացել է, իսկ եթէ սիրտս, փորս ցաւել է, դարչնով, պղնձափիլով չայ եմ խրմել կարել է։ Թուրքի անունը Հաչէ-Ղասիլ է, և մի ժամանակ էլ մասնակցել է եղել Զարար-Ղասլի խռովին. չատ լաւ յիչում է զարտադիկը պատերազմները, Մազամէտների և միւսների մասին, Շուշու առնելը և այլն։

— ԱՍԻԱԲԱԴԻՑ.—Ուսուց մայր եկեղեցի են կառուցանում այսպէս. եկեղեցու հիմնարկութեան համար արդէն կազմուած է կոմիտէ։ Աւազանական տանտէրների վրայ աւազանական զորք կեդրոնացրած լինելու և յարձակման երկիւղ լինելու պատճառով, չատացրած են զօրքը և ամէնքի այս կողմում, մանաւանդ Քէլբէրում և Ալէքսանդրիայում և Թուրքեստանի մասերում պլատօրպէտ։

— ԵՐԵՒԱՆԻՑ.—Պատրաստութիւններ են տեսնում Թեմական դպրոցի համար նոր հոգաբարձուներ ընտրելու։ Ցոյս ունինք, որ Ժողովուրդը կուչտաի ոգեղեն կարելի է լաւ անձեր ընտրելու այս պաչտօնի համար։ Արդէն մի քանի եկեղեցիներում պատգամաւորների ընտրութիւններն եղել են։

—Թեմական դպրոցի հոգաբարձութիւնը հաստատուել վճռել է ապրիլի 23-ին տօնել դպրոցի 50 ամեայ յոբելեանը ուսումնարանի բակում։

— Մօտերքս Վարդաչէն գիւղում (Նուխու գաւառ) և Լամբերանում (Զուանչիրի գաւառ), Կովկասի պետական կալուածների վարչութեան ցուցումներով, կառավարութեան հաչուով կը հիմնուի երկու չերամանոց, որոնց կառավարութիւնը, «Кав.»-ի ասելով, յանձնուած է պր. Թօրոսչեին և Միրխանեանցին։

— ՂԱՄԱՐԼՈՒԻՑ. — Անցեալները պատահեայ ս. Խոր-Վիրապի վանքում, ուր մի տարօրինակ նորածին գառ տեսայ.—այդ գառը չորս աչք ունէր, և ծնուելուց մի չաբաթ յետոյ սատկեցաւ։

—Տեղիս ուսումնարանը փոխադրելու վտանգի մէջ է. ոչ հոգաբարձութիւն

իսկ ինչ վերաբերում է ներկայ դրությանը, ապա ինքնին հասկանալի է, որ ոչ ոք չի կարող ուրախանալ այն հանգամանքի վրա, որ մեր ժողովուրդը ենթարկվում է ամենաանողոքամիտ հալածանքների։ Ամեն ոք, ով ունի մարդկային զգացմունքներ, ամեն ոք, ով ունի ազնիվ համոզմունքներ, ամեն ոք, ով ունի ազգային ինքնագիտակցություն, պետք է ցավակցի այդ հալածանքներին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(Շարունակութիւն)

Ամերիկեան Միջնադարեան Ընկերութեան Տարեկան Ժողովը

Փիլիպ 5 Ապրիլ

Վերադառնալ է դառնալ ասոր եղած տարեկան ժողովին, որ տեղի ունեցաւ Ապրիլ 5-ին, Ամերիկեան Միջնադարեան Ընկերութեան Ընդհանուր Ժողովին մէջ։ Ներկայ էին Ընկերութեան Վարչութեան անդամներէն Պրն. Ռ. Ռ. Ռոպինսոն, Պրն. Ռ. Ռ. Ռոպինսոն, Պրն. Ռ. Ռ. Ռոպինսոն,

կան կեանքի մէջ—կրթութեան և դաստիարակութեան դործում։ Ամեն տարի ամառուայ երկու ամիսներին արձակուրդ են տանում թէ աշակերտուհիները և թէ աշակերտները։ Ամեն մի մտածող մարդ ինքն իրեն հարց է առաջարկում, թէ ինչ պէտք է լինի այդ մի քանի ամառուայ մէջ արձակուրդ ստացած աշակերտների մտաւոր կեանքի ընթացքը։ առանց դպրոցների, առանց մի որ և է կրթող հասարակական հիմնարկութեան։ Նոյն բանը կարող ենք ասել նաև ընդհանրապէս մեծ ու փոքրի, հարուստ, միջակ և աղքատ դասակարգի վերաբերմամբ։ Ինչ պէտք է լինի մի երիտասարդի դրութիւնը, երբ բաղդը նրան վիճակել է լինել ազգատ ծնողի որդի, երբ նա մեծացել է առանց ընտանեկան կրթութեան, երբ նա բարի օրինակ չէ տեսել ընտանեկան չրջանում և բարեկրթի հասարակութեան չրջան չէ ընկել, այդպիսիների, որոնք քամբաղդաբար չատ չատ են նամանաւանդ տեղս, ի հարկէ կամայ ակամայ յաճախում են զանազան անբարոյական հիմնարկութիւնները և զրկւում են մարդավարել պատուաւոր կեանքից։ Ասածներիս ապացոյց, որ Մօզդոկի հայ երիտասարդութիւնը վարակուած է զանազան ախտերով (բացառութիւնը մի կողմ), նա մանաւանդ սիֆիլիսը, այդ անբուժելի չար չատ թարմ և աչխոյժ երիտասարդներին անխնայօրէն գերեզման է տանում։ Կան ի հարկէ և այնպիսի երիտասարդներ, որոնք աչք ունին ընթերցանութեան և ինքնակրթութեան, բայց այդպիսիներին պակասում են ընթերցանութեան հարկաւոր գրքերը։ Նրանցից չատերի նիւթական միջոցները չեն նորում գնելու զանազան ընթերցանելի գրքեր, որոնք մեզանում չեն էլ գտնում. բայլ այդ, և՛ չգիտէ, թէ ինչ տեսակ մատչելի գրքեր են հարկաւոր կարդալ, որոնցից կարողանայ օգուտ քաղել։ Ցաւալի է, ի հարկէ, որ մեր մէջ մայրենի լեզուով հրատարակուած լաւագիրները չատ քիչ են տարւում և դեռ այժմ էլ կան այնպիսի պարոններ, որոնց—երբ հարցնում ես, թէ արդեօք ինչ տեսլի լաւ բան են գտնում լաւագրում, պատասխանում են՝ տեսլի ոչինչ, բայց ինչ անենք, չենք հասկանում հայերէն կազմների և այլ հայերէն հրատարակութիւնների լեզուն, որովհետև գրաբառ են»։ Ահա այսպէս մեր այժմեան հասկանալի և մատչելի աչխարհաբառն անհասկանալի գրաբառ է երեսում մեր պարոններին, որովհետև գրանք ոչ մի անգամ նեղութիւն չեն տեսել վերցնել մայրենի լեզուով հրատարակուող լաւագիր ու կարդալ, և եթէ պատահմամբ «Նոր-Դար» լաւագրի մէջ լոյս է տեսած լինում Մօզդոկից թղթակցութիւն և կամ մի ուրիշ լուր, իսկոյն որոնում են լաւագիր ստացողին, վերցնում են և մեծ բաւականութեամբ կարդում. լինում են և՛ տեղեր, որ չեն հասկանում կարդացածը, և դիմում են մի փոքր կարդացողներին, որ տեսլի որոչ պարզեն կարդացածի միտքը։

Անցեալ տարի քահանաներս ժողով կայացրինք, ուր միաձայն համաձայնութեամբ վճռեցինք վերսկսել թերութիւնը լրացնել, գործը գլուխ բերել. և մենք մեծ բաւականութեամբ պատուական «Նոր-Դար»-ի մէջ՝ չնորհակալութեան հետ՝ հրաւիրեցինք ժողովրդականներին օգնելու և ընկերանալու մեզ հետ այդ բարենպատակ գործի ձեռնարկութեանը։ Սակայն, թէ խնդիրս և թէ հրաւէրս՝ «ձայն բարբառոյ յանապատի» մնաց, և թէ նոյն իսկ գործին ձեռք գարնողները փախստ տուին և իրենց խօսքը նա վերցրին.... Վերատին դառնում եմ այդ խնդրին, և խնդրում եմ ազգակից եղբայրներիս՝ գլուխ բերել այդ վերսկսել ղգալի պահանջը, որը ամեն մի անհատիս համար կարևոր է և պարտականութիւն։ Հայերէն խօսելը չատ կաղէ կաղ է առաջ գնում մնչանում, պէտք է անպատճառ կենդանացնել և առաջ տանել նաև ընտանեկան չրջանում։ Նամանաւանդ այժմ հայերէն հրատարակութիւնները և թէ ընթերցանելի գրքերը չատացել են և պահանջը չատ զգալի...։ Եթէ պրպտրան ունենանք, մեզ այնքան ծանր չի լինիլ նիւթական կողմից և ամեն մինս կ՚օգտուենք յարմար դէպքից։ Ցոյս ունենանք, որ գոնէ այժմ կաչխատանն հայրենակիցներս գործը գլուխ բերելու։

Խ. ք. Շ.

ԿԵՐՉ, 27 մարտի. — Անցեալները «Նոր-Դար»-ի միջոցով յայտնել էինք թէ ուսումնարանի բացուելու և թէ ուսուցչի աչխատութեան մասին, բայց պիտի աւելացնենք, որ միմիայն ուսումնարանի բացուելով դեռ գործը բաւարար հետևանքի չի հասնիլ, այլ հարկաւոր էր նաև ուսումնարանական չէնք ունենալ, ի նկատի առնելով, որ նոր սերնդի առողջութիւնը մեծապէս կախուած է ուսումնարանի չինութիւնից։ Ահա հենց ուսումնարանական չէնքի կարկը խիստ զգալի էր այսուհետ։ Մինչև այժմ մեր աչակերտներն զետնուած էին մի փոքրիկ, ամենասոյսարմար սենեակի մէջ, ուր ուսուցչին անգամ հազիւ էր կարողանում չրջել. կարելի է երևակայել, թէ ինչ կը լինէր մի այդպիսի սենեակի միջի օդը, ուր զետնուած են 20-ի չափ աչակերտներ։

Ի հարկէ, գրա պատճառն անհոգութիւնն էր, նամանաւանդ որ գրամական միջոցներն այնքան էլ սուղ կարելի չէ անուանել և ժողովուրդն առատաձեռն է ամեն մի բարի գործի համար. հարկաւոր էր միայն գործին գլուխ կանգնել, գործ չինել։ Բաւական է, որ մի հասարակութիւն ընտրում է որ և է պաչտօնի համար մի առաջնորդող անձն լինի նա հոգևորական թէ աչխարհական, նրա ընտրածը բարեխիղճ է և գործ է իր պարտաւորութիւնն և մամամբ էլ հատատ կանչ ունի, արդէն ամեն ինչ չատ հեչտութեամբ կ՚իրագործուի։ Մեր յարգելի երէցփոխ պ. Աւագեանը, ի նկատի ունենալով մեր ուսումնարանի վերնում յիչուած անյարմարութիւնը, առանց որև է նիւթական ապահովութեան, ձեռնարկեց նոր ուսումնարանի չինութեան՝ հնի տեղն, և ահա մի ամիս չանցած՝ պատրաստ է մի ընդարձակ ուսումնարանական չէնք իր յարմարութիւններով։ Ի հարկէ, կարելի է պ. Աւագեանին միայն չնորհակալութիւն յայտնել, որ Կերչի մանուկների առողջութիւնը վտանգից ազատեց։ Նոյնպէս չնորհակալութեան արժանի են այն անձերն, որոնք իրենց յօժար կամքով ուրախութեամբ նպաստեցին չինութեանը։ Այսպէս օրինակ, պ. Գ. Սելինեանը նուիրեց 60 րուբլու վայտեղէն, պ. Ս. Յարութիւնեանը՝ 100 ր. քար ու ատաղ, պ. Կ. Փեմչուղեանն 200-չատ քար։ Բայց չէ կարելի առանց ցաւելու չյիչել, որ մի այսպիսի անհրաժեչտ և բարի գործի իրագործման համար էլ կային մարդիկ, որոնք փոխանակ ուրախութեամբ մասնակցելու գործին, աչխատում էին արգելք լինել... ինչի՞ նման է սա։

Նոյնպէս չնորհակալութեան արժանի են պ. եղբ. Պօղովիանները, որ յարգելով էջմ հանդուցեալ հօր յիչատակը, իրենց ծախքովն չինեցին եկեղեցու դանգակատունը։

***

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Վիեննայում սաստկած տեղիկութիւնները նայելով, բօլղարական կառավարիչները բոլոր սահմանների վրայ աւելացնում են թէ զօրքերը և թէ ռուսիկական պահպողների թիւը։

—Իտալական Համբերտ թագաւորը Բերլին կայցելէ մայիսին, իսկ աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրը—օգոստոսին,

—Հարչտանի հանգուցեալ Նէգուս Յովհաննէսը գահը կտակել է իր քոռորդուն՝ Դէսիակ Մանգաչային, որ իր կրթութիւնն ստացել է Հնդկաստանում և Եղիպտոսում։ Ասում են Անգլիան նրան է օգնում հազար երկու թնդհրանօթներով։ Հարչտան զօրաւոր Բաս-Աղան զօրք է հաւաքում։

—Մարտի 24-ին Բրիւսելում Բալանժէի նախագահութեամբ տեղի է ունեցել բանտարկեալների դաղանի ժողովը, ուր հաւաքուած են եղել համարեա ամբողջ «ազգային յանձնախմբի» բոլոր անդամները։ Ներկայ կէս պիչերին գալիս են Լագէրլը, Նակէն, Լէգազը, Միլլեան և բանտապահական Գիւզ-դը-լա Ֆօկոնպէրին։ Առաւօտեան ժամը 5-ին գալիս է նաև Վէրնեաւն։ Կէս պիչերին եկող բանտարկեալները՝ Բօչֆօրի և դրաչ Վիլլոնի ու ամուսնու առաչնորդութեամբ, ճաչում են Բալանժէի մօտ։ Խորհրդակցութիւնը, որ քաղաքական նպատակ է ունեցել, վարը ինչ ուչ է կատարել,—սկսուել է առաւօտեան ժամը 9-ին և տևել է մինչև կէս օրից յետոյ։ Խորհրդակցութեան առարկան դաղանի են պահում։

—Իտալական կառավարութիւնն որոչել է արչատամբի վրայ 2000 հոգի էլ աւելացնել։

—Մարտի 30-ին պիներալ Բալանժէն Բէլգիական ապր. ժողովի անդամ Սօվինի տանը եղած ինջոյքին է գնացել։ Ներկայ եղող բոլոր մինիստրներն ու քաղաքապէտները ամբիջապէս հետևանում են անից։ Միւս օրը արտաքին գործերի մինիստր պր-Շեռնէն խիստ կերպով կշտամբել Սօվինի այդ վարմունքը և յայտնել, որ այսուհետև իր բոլոր յարաբերութիւնները կարում է նրա հետ։

—Դիներալ Բալանժէն «Crédit Lyonnais» բանկի Բրիւսելի ճիւղին ընթացիկ հաչուով ութ միլիոն ֆրանկ է յանձնել։

—Աւստրիայում «մլադօչէխ» և «ստարօչէխ» կուսակցութիւններին պատկանող լրագիրների միջև չկամ վիճաբանութիւն է բացուել Աւստրիայի և Գերմանիայի դաչնակցութեան մասին, Գրէգերի յայտնած կարծքի համար։ Մլադօչէխները յայտնում են, որ երբէք չպիտի համակրեն այդ դաչնակցութեանն, ստարօչէխներն, ընդհակառակն, ապացուցանում են, որ չէխերի մեծ մասը և այն էլ, որոնցից ամենանչանաւոր անձերը, Գերմանիայի հետ դաչնակցելու կողմն են։

—Սերբիայի նախկին Միլան թագաւորը, որ բռնական ժամանակ Կ. Պօլսում էր և չքեղ ընդունելութիւն էր գտել Սուլթանի կողմից, մարտի 30-ին ուղևորել է Նաֆֆա, որտեղից, հաւանաբար, Երուսաղէմ կը գնայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Արտաւանեանի լրագիրները հաղորդում են, որ Բաւտեմբէրգեան պրինց Ալէքսանդրի մայրը, վկայած իր որդու ամուսնութեան վրայ, վանք է մտել։

*** Չերնոգորիայում կամաց-կամաց տարածւում է լրագրութիւնը. բայլ կառավարութեան պաչտօնական օրգանից, այժմ հրատարակւում է նաև մի ամսագիր, որ լուսաւորութեան մինիստրի և միտրապոլիտի օրգանն է լինելու։

*** Վիեննայում մի կին, խելագարութեան վարկեանին ուղեցել է սպանել իր հինգ երեխաներին։ Այդ նպատակով նա երեխաների վրայ ածում է նաեֆ և, այրելով, գնում ջրհորն է ընկնում։ Բարեբաղդաբար մեծ աղմիկը բոլոր նկատելով, սկսում է օգնութեան կանչել։ Հարևանները լսում են, օգնութեան են հասնում և երեխաներին ազատում։

*** «Համաչխարհային իւղ»-ի գործարանը, որ ամբողջ աչխարհիս մատակարարում է մետաղական դանազան իւղ մաքրելու իւղ, ամեն մի օրուայ մէջ այդ իւղից պատրաստում է 80,000 տուփ և էլի չէ կարողանում գոհացնել ամեն կողմից եղած պահանջներն։

*** Մարտի 28-ին, 103 տարեկան հասակում, Պարիզում վախճանեցաւ հռչակաւոր քիմիկոս Շեռէլը։ Նա ծնուել է 1786 թ. յուլիսի 31-ին։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ալէքսանդրապօլ, Ռ. Ց. Պ-ին.—Ձեր նամակը չենք հրատարակում. «Նոր-Դար»-ի № 45-ում հրատարակուած լուրը չէ վերաբերում վերջին ընտրութեան. ընդհակառակն վերջին ընտրութեան մասին «Նոր-Դար»-ի վերջին համարներից մինում ուրիչ լուր կը կարդաք։

—

Շուշի, Լատաեին.—Ձեր էք վրդովւել. խմբագրութիւնս այդպէս ոչ մի թ-ի նամակ չէ գրել։ Այդպիսի մի պատմութիւն է խմբագրութեան, որ իբր մի վկայ, որ ձեր աչխատութեան պատրաստում է, հրատարակենք։ Բայց պատճառը «Նոր-Դար»-ի միջոցով է արուած։ Իսկ թերթիս խմբագիրն ամենևին մասնաւոր նամակ գրելու սովորութիւն և ժամանակ էլ չունի։ Ինչ որ ձեզ ասել են, երևակայութեան ծնունդ է։

—

Նոր-Նախիջևան, Ց. Պ.-ին.—Գրքերի գինը 6 ր. 75 կոպէկ է. Ճանապարհածախսը՝ 1 ր. 40 կ., ուրեմն ընդամենը՝ 8 ր. 15 կոպէկ։ Գրքերը ուղարկեցինք։

—

Բուչչուկ. պ. Ց. Ե-ին.—Ձեր խընդիրքը կատարել «Նոր-Դար»-ը ուղարկեցինք ձեզ։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

CAPSULES DE MATICO

RDe GIMAULT & Ce, Pnarmaciens

A PARIS

PERMIS EN RUSSIE

ՄԱՏԻԿՕԻ ԿԱՊՈՒՏՆԵՐ

Պարիզի Գրիմօ և ընկ. դեղավաճառների.

Ռուսաստանում ընդունուած.

Այս կապսոլները հրաչտն (gonorrhée) դէմ գոյնաձուած դեղօրէից ամենից ապդուն է, և բացի սրանից այն առաւելութիւնն էլ ունի հեղուկ կօքահիւսով լցուած կապսոլներում։

Ծախւում է Պարիզ Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղատներում.

(M) ա 19—14

«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ»

իրենց ջղային կազմուածքի համար իրենց ջղային կազմուածքի համար խնդրող հիւանդների համար

Հեղ. Դ-ր Լօրէնցէ

աուսերէն հրատարակութեան Դ-ր Բ-լի

Գինն է 1 րուբ.

Այս օգտակար գիրքը պարունակում է իր մէջ չատ խրատներ, թէ՝ ինչպէս կարող են ապրուստ հիւանդները վերսկսել ախտի վերնասակար հետևանքներից և վերականգնել իրենց ուժերը և առողջութիւնը։ Այս գիրքը թարգմանուած է Մոսկուայի պրոֆեսորական կօմիտէից։

Հրատարակութեան պահեստն է Օտտօ Ասպերգէրի Տօ Լայպցիգում (Otto Asperger Leipzig) (Սաքսօնիա)։ Օտարազգացագրերը ճանապարհածախս չեն վճարում։

(M.) 52—7

ПАРФЮМЕРІЯ

ВЫСШАГО КАЧЕСТВА

А. СІУ и К°

МОСКВА.

НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(M) 50—33

ԿՕՅԼՐԻ ՍԱԼՍԱՊԱՐԵԼԵԱՆ ԷՍՍԵՆՑԻՆ

ESSENCE DE SALSEPAREILLE COLBERT

Պահանջել, որ նշանաթղթի վրայ լինի կարմիր գոյնով տառագրութիւն։

Պահեստը գտնւում է Թիֆլիսի բոլոր գլխաւոր դեղատներում։

Պարիզում—Phcie Rogé, 9, rue du quatre Septembre.

(M.) 8—1

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԴՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ եւ Ը-ՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, ապրիլի 13-ին, «ԱՆԱՏՕԼԻԱ» (Anatolie) շոգենաւը, նաւապետ «ԲՕՇԵԼ» (Boschel) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՐԷՆՕԻՆ, ն խկին գալերէյա Արծրունիների № 103. 2—2

Дозволено цензурою. г. Тифлисъ, 7-го Апрѣля 1889 Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова.